

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԿԵԼԻ ՀՅՈՒՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԽՈՎԱԾՈՒ

ԴՐԱԿ Վ

1950

Վայսկ Վ

Ա. Պ. ՊԵՏՐՈՎԱՆ ԵՎ Ս. Ս. ԿԱՐԱԳՈՒԵՅԱՆ

ԻԹԵՌՆԱԾԱՂԿԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ
ՍՈՐՏԵՐԻ ՊԱԼԱՐԱԳՈՅՑՄԱՆ ԻՆՏԵՆՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Խոտաղաշատին ցանքաշրջանառությունների լայն կիրառական կապակցությամբ թիթեռնածաղկավոր բույսերի նշանառությունն առավել ևս կարեոր է զառնում: Այդ կապակցությամբ, բոլոր այն միջացառումները, որոնք նպաստում են թիթեռնածաղկավոր բույսերի կողմից ազդակի ֆիքսացիայի ուժեղացմանը, մեծ նշանակություն ունեն խոտաղաշտային ցանքաշրջանառությունների մեջ մտնող կուլտուրաների բերքի արձրացման գործում:

Մթնոլորտի ազգան ինտենսիվ յուրացվելու համար անհրաժեշտ է, որպեսզի մի քանի կարեոր պայմաններ գործեն ամենթաց՝ պալարաբակտերիաների ռասաները, նրանց ազդակավելու ինտենսիվությունը, նրանց իմունիտետը զեպի թիթեռնածաղկավոր բույսերի տարրեր սորտերը, հողակլիմայական պայմանները և այլն:

Ներկա աշխատության մեջ քննության է առնվում միայն պալարաբոյցման ինտենսիվության հարցը՝ փորձի նույն պայմաններում:

Էռավատինան (Լոպատին, 1939) և ուրիշները, ինչպես և Կիրառական բուսաբանության Համամելիութենական ինստիտուտի սորտացանցի տվյալները ապացուցել են, որ սոյայի տարրեր սորտերը միանգամայն տարրեր ինտենսիվությամբ են վարակվում, կամ որոշ սորտեր բոլորովին չեն վարակվում սոյայի պայմարաբակտերիաների որոշ կուլտուրաներով: Սոյայի պալարաբակտերիաների այսպիսի նեղ մասնագիտացումը մասամբ բացատրվում է նրանով, որ առհասարակ այդ կուլտուրայի պալարաբակտերիաները շատ հողերում չեն լինում: Ինչպես հայտնի է, միշտաք հեղինակներ, պալարաբակտերիաներն ըստ իրենց նմանությունների խմբավորելիս՝ սոյան միշտ հատուկ խմբի մեջ են դասել:

Թագումովսկայան (Разумовская, 1937) ուսումնասիրել է ոլոռնի 50 տարրեր սորտերի պալարաբակտերիաներով վարակվածության ինտեսիվությունը բնական պայմաններում և ինոկուլացիայից հետո։ Պարզվել է, որ ոլոռնի տարրեր սորտեր նույնպես միանգամայն տարրեր ձևով են վարակվել, եղել են նաև այնպիսի սորտեր, որոնք բոլորովին պալարներ չեն առաջացրել։

Նման արդյունքներ ստացել է Պետրոսյանը (Петросян, 1944) կորնգանի տարրեր սորտեր ուսումնասիրելիս։ Նույն հողային պայմաններում կորնգանի տարրեր սորտերի բնական վարակվածությունը միանգամայն տարրեր և եղել եղել են այնպիսի սորտեր, որոնք բոլորովին չեն վարակվել։ Արհեստական վարակման դեպքում ևս նույն շտամի պալարաբակտերիաներով վարակված կորնգանի տարրեր սորտերի վարակման ինտենսիվ վությունը եղել է բոլորովին տարրեր։

Քոռշնայի (Ergum vicia) վերաբերյալ Մերարյանի (Мерабян, 1946, 1946 ա) կատարած փորձերը հաստատում են վերանցված գրույթները։

Փանոսյանը (Паносян, 1946), Հայաստանի տարրեր է կոլոգիական պայմաններից վերցրած առվույտների պալարաբակտերիաները ուսումնասիրելիս՝ նույնպես եղել է այն եղանակացության, որ էկոլոգիական պայմանները խոշոր չափով ազդում են պալարաբակտերիաների առանձնահատկությունների վրա։

Վերը հիշված հեղինակների փորձերի արդյունքները կարելի է բացատրել հիմնականում արտաքին միջավայրի աղղեցությամբ, որը չեղանական է տարրեր աղղեցությունը չունենալ մշակվող կուլտուրաների և միկրոօրգանիզմների այս կապահանջիկայի վրա։ Այս հարցում կարենոր դեր ունի նաև ավյալ բույսի իմունիտետը դեպի փորձարկվող պալարաբակտերիաների շտամները։ Շատ հաճախ կողք կողքի ցանված բույսերը միանգամայն տարրեր չափով են վարակված լինում, որպես է բացատրել, ըստ երեսույթին, տվյալ անհատ բույսեր բիոլոգիական առանձնահատկություններով։ Հաջորդ կարենոր գործառնը՝ գա փորձարկվող պալարաբակտերիաների մասնագիտացում է թիթեռնածաղկավոր նույն և տարրեր բույսերի համար։

Կրասիլնիկովը (Красильников, 1941, 1945) վերջին տարին կատարած աշխատություններով ապացուցել է, որ տարրեր թիթեռնածաղկավոր բույսերի՝ ոլոռնի, վիկի, առվույտի լորու, ակացիայի պալարաբակտերիաները երեքնուկի և առվույ-

աի վրտ առաջացնում են պալարիկներ, և թե այդ բակտերիաները նախօրոք 2—7 ամիս աճեցվեն երեքնուկի և առվույտի պալարակտերիաների ֆիլտրատում, այսինքն՝ այդ բակտերիաների նյութափոխության արդյունքը հանդիսացող միջավայրում. պարզվում է, որ հիշյալ միջավայրում պահելիս տարրեր պալարակտերիաներ փոխում են իրենց առանձնահատկությունները և վիրուլենտ են գառնում բոլորովին օտար բույսերի՝ երեքնուկի և առվույտի համար: Այդ նույն մեթոդով հրասիլնիսվին հաջողվել է դաստիարակել նույնիսկ ոչ պալարաբակտերիաների (Pseudomonas-ներից երկու շատմի) և ստիպել նրանց պալարիկներ առաջացնել երեքնուկի և առվույտի վրա:

Այսպիսով, արտաքին խիստ յուրահատուկ պայմանների ազդեցության տակ, պալարաբակտերիաները փոխում են իրենց առանձնահատկությունները և ձեռք են բերում բոլորովին ուրիշ թիթեռնածաղկավոր բույսեր վարակելու և պալար առաջացնելու ունակություն: Այս երեսույթը հետաքրքրական է թէ տեսականորեն և թե պրակարիկ նշանակությամբ:

Վերը բերված դրականության տվյալներից պարզվում է մի կողմից՝ պալարաբակտերիաների առանձնահատկությունների փոփոխությունը որոշ արտաքին պայմանների ազդեցության տակ, իսկ մյուս կողմից՝ նրանց նեղ մասնագիտացումը նույն թիթեռնածաղկավոր բույսերի տարրեր տեսակների և սորտերի սահմանում: Սակայն, այդ տվյալները, ըստ էության, իրար չեն հակասում, քանի որ արդյունք են միանդամայն տարրեր պայմաններում դրված փորձերի և ընդհանուր են կենդանի օրդանիքմների համար:

Սասրե բերված տվյալները հաստատում են, որ պալարաբակտերիաները նույն թիթեռնածաղկավոր բույսերի տարրեր տեսակների, սորտերի և պոպուլացիաների վրա միատեսակ ինտենսիվությամբ պալարներ չեն առաջացնում թէ ընական պայմաններում և թե արհեստական վարակման դեպքում:

Փոքրձարկվել են սիսեսի, մաշի, լոբու, լյուսլինի, առվույտի և կորնդանի բաղմաթիվ տեսակներ, սորտեր և պոպուլացիաներ:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Երկրագործության ինստիտուտի սելեկցիայի և սերմարուծության սեկտորը 1944—48 թ. թ. ընթացքում ուսումնասիրեր է վերոհիշյալ կուլտուրաների տարրեր սորտերը և պոպուլացիաները, նրանցից լավագույնները մեր ուսումնաբակալայի տարրեր հողակլիմայա-

կան պայմանների համար ընտրելու նպատակով։ Նույն ինստիտուտի հողի միկրոբիոլոգիայի սեկտորը միաժամանակ զբաղվել է հիշյալ թիթեռնածաղկավոր բույսերի պալարաբակտերիաների ուսումնասիրությամբ։

1-ին աղյուսակում բերվում է մաշի (Vigna sinensis) տասը տարրեր սորտերի և նմուշների պալարագոյացման ին տեհնախվությունը Երևանի փորձադաշտի պայմաններում, բույսերի ծաղկման և պտղակալման ժամանակաշրջանում։

Աղյուսակ 1

Մաշի տարրեր սորտերի և պոպուլացիաների բնական վարակվածության
ինտենսիվությունը Երևանի փորձադաշտում

Մաշի սորտերը և պոպուլացիաները	15 բույսի պալար- ների		1 բույսի պալար- ների	
	թիվը	քաշը գ	թիվը	քաշը մգ
Կարճեան—սպիտակ	210	8,25	14	550
‘ ‘ սե	90	14,0	6	933
‘ ‘ մոխրագույն	225	4,5	15	300
Կիրովաբագ—դեղին	120	9,5	8	633
‘ ‘ սորտային	205	29,75	14	1983
‘ ‘	165	8,85	11	590
Հոկտեմբերյան—սպիտակ	450	24,25	30	1616
Մեղրի—սպիտակ	75	1,25	5	83
Աշտարակի—Փարպի—դեղին	35	1,85	2,5	123
Նոր-Արեւ—դեղին	160	15,25	10,6	883

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, մաշի փորձարկ վող տասը սորտերն ու պոպուլացիաներն իրենց պալարաբակտերիաներով վարակվելու ինտենսիվությամբ նման չեն իրար Ամենից շատ թվով և քաշով պալարներ եղել են Կիրովաբագ սորտի և Հոկտեմբերյանի սպիտակ նմուշի վրա (1,6—1,98 պալարիկներ մեկ բույսի վրա), մինչդեռ գրանց կողքին Մեղրի սպիտակ և Աշտարակի դեղին նմուշները մեկ բույսի վրա ունեցել են 0,043—0,123 գ պալարիկներ։

Այսպիսի ուժեղ տարրերությունը պետք է բացատրել միայն պալարաբակտերիաների տվյալ ուսուաների նեղ մասնագիտացմամբ, այլև թիթեռնածաղկավոր բույսերի բիոլոգիական առանձնահատկություններով և նրանց իմունիտետով գեպավակալ փորձահոգում եղած պալարաբակտերիաների ուսուաները։

Այդ են հաստատում 2-րդ և 3-րդ աղյուսակների տվյալները Հայաստանում տարածված սիսեռների վերաբերյալ։ Այսպես, Աշտարակի—Թուլինարի և Ղարաջորանի, նաև Ստեփանա-

Ակրակ պոպուլացիաները, թե մեկ և թե մյուս ազյուսակների տվյալներով՝ եղել են ուժեղ վարակված, իսկ Ադրբեջանական՝ № 583 սպառ եղանակում էլ շատ թույլ է վարակվել:

Սիսենների փորձարկման առաջին երկու տարիներում ու սույնափակել են մեծ թվով սորտեր և պոպուլարիտետ, որոնցից ընտրվել են առաջին էֆեկտավորները և հաջորդ տարվա փորձերը գրվել են միայն ընտրված պոպուլարիտետի վրա (աղյուսակ 3):

Դիտողությունները բոլոր դեպքերում կատարվել են բույ-
սերի ծաղկման ժամանակաշրջանում:

Աղյուսակ 2

Սիսեռի տարբեր սորտերի և պողուլացիաների բնական վարակվածության
ինտենսիվությունը Երևանի փորձագույնում 1947 թ.

Առլտեր և պոսլութացիաներ	Քէվը	Քաշը դ-ով
Հենքնականի	245	7,60
Մեղրի—սպիտակ	265	11,50
«	505	15,65
Միկայանի	320	13,5
Էջմիածնի—դաշտ. «և 199	150	2,25
» Ազրբեջանական 583	240	9,10
Աշտարակի - Թաքիս	265	9,25
» Դարսաջորան	480	16,25
« Եղբարդ	200	13,50
« «	210	9,70
« Դովրի	250	8,65
« Թուլինարի	525	28,85
Կոտայքի—Զառ.	215	8,85
« Նուռնուս	175	4,10
« Ջրվեժ	105	4,50
« Գեղագիր	195	10,0
Ստեփանակերտ—Մահմետ	290	10,5
« Աբանզամին	540	17,5
« Ասրութի	110	3,5
« Կուրանի 199	675	25,35

Սիսեռի վերաբերյալ փորձերը Յ տարի անընդհատ (1946, 1947, 1948) դրված են եղել Երկրագործության ինստիտուտի Երևանի փորձագայում նույն հողամասի վրա: Զնայած դրան, ինչպես երեսում է 2-րդ և 3-րդ աղյուսակների տվյալներից, հետազոտվող տարրեր սովորեն ու պոպուլացիաներն իրենց պալարագոյացման ինտենսիվության տարրերությունը պահպանել են:

Աղյուսակ:

Սիսեռի տարբեր սորտերի և պոպուլացիաների բնական վարակվածության ինտենսիվությունը Երևանի փորձադաշտում 1948 թ.

Սորտեր և պոպուլացիաներ	15 բույսի պալարիկ-ների		Մեկ բույսի պալարիկների	
	թիվը	քաշը գ	թիվը	քաշը մգ
Սոնկանակերտի — Մահմեդ	426	3,30	28	228
Աշտարակի — Թուլինարի	522	3,71	35	250
« Ղարաջորան	390	4,29	26	286
Էջմիածնի — Աղբահյանական 583	390	1,25	26	83
Աշտարակի — Ղարաջորան	202	5,26	14	35
« Դովրի	360	2,88	24	192
« «	352	1,98	23	132

Կորնգանի պալարագոյացման ինտենսիվության վերաբերյալ կատարված ուսումնասիրություններում (աղյուսակներ 4 և 5):

Առվույտի տարբեր սորտերի և պոպուլացիաների բնական վարակվածության ինտենսիվությունը փորձի նույն պայմաններում (1948 թ.):

Սորտեր և պոպուլացիաներ	Բույսի թիվը	Պալարիկների ընդհանուր		Մեկ բույսի պալարիկների	
		թիվը	քաշը գ-ով	թիվը	քաշը մգ-ով
Լենինականի փորձադաշտ					
Հոկտեմբերյանի — Գելըլու 4	25	200	0,25	8	10
Կոտայքի — Արտմուս 13	25	100	0,13	4	5,5
Ազիզըկովի — Մարտիրոս 18	25	131	0,13	5,5	5,5
Եղվարդի սորտաստարգման փորձադաշտ					
Ապարանի այլատեսակ	55	112	0,10	2	1,7
Արարական սորտ	51	252	0,25	5	5

5-րդ աղյուսակի տվյալներից պարզվում է, որ կորնգանի նույն էկոստիպերը փորձարկման տարբեր պայմաններում ևս նույն ինտենսիվությամբ չեն վարակվում: Այսպես, Սիսեռի էկոստիպը Երևանի փորձադաշտի ջրովի հողերի պայմաններում մեկ բույսի վրա առաջացրել է 540 մգ պալարիկներ, այդ նույն էկոստիպը Եղվարդի սորտաստարգման փորձադաշտի անջրգի հողերի պայմաններում 1 բույսի վրա առաջացրել է 214 մգ պալարիկներ: Այս տարբերությունը շատ ավելի ցայտուն եղելում է Մարտոնու էկոստիպի վերաբերյալ որի մեկ բույսի վրա Երևա-

Աղյուսակ 5

որնդանի տարրեր սորտերի և պողուլացիաների բնական վարակվածության
ինտենսիվությունը փորձի նույն պայմաններում (1948 թ.)

Սորտանի և պողուլացիաներ	Բույսերի թիվը	Պալարիկների ընդհանուր		Մեկ բույսի պալարիկների	
		թիվը	քաշը գ.ով	թիվը	քաշը մ.գ.-ով
Կրևաճի փորձադաս					
Դարագյաղի №1 էկոուխու	5	337	5,34	67	670
Դարագյաղի №2 և	8	447	4,76	56	330
Սիսիանի №3 և	14	1691	7,62	85	540
Թալինի №4 և	10	262	3,95	99	390
Եղվարդի սորտաստուգման փորձադաս					
Սիսիանի էկոուխու	41	443	8,77	197	214
Դարագյաղի	47	323	2,15	67	43

Նի փորձադաշտում առաջացել են 330 մգ. պալարիկներ, իսկ
Եղվարդի պայմաններում՝ միայն 45 մգ. Սա բացարձում է
հիշյալ փորձադաշտերի հողակլիմայական պայմանների, հատ-
կապես ջրային ռեժիմի առանձնահատկություններով:

Նույնանման տվյալներ ստացվել են լյուսինի տարրեր տե-
սակները նիտրագինով վարակելիս (աղյուսակ 6):

Հայկական ՍՍՌ-ում լյուսինը մինչև այժմ չի մշակվել:
1947 թ. սկսած պրոֆ. Ն. Ա. Մայուռյանը փորձարկում է այդ
կուլտուրայի բազմաթիվ տեսակները՝ նրանցից մեր հողակլիմա-
յական պայմանների համար առավել էֆեկտավորները հայտնա-
բերելու և ներդնելու նպատակով:

Ինչպես հայտնի է, լյուսինի պալարաբակաների բաներն ամեն
տեսակի հողերում չեն լինում, և այդ կազմութայի բնական
(սպիտակ) վարակվածությունը հազվադյուր է, ուստի փորձարկ-
վող բոլոր սորտերը ցանքից առաջ վարակվել են չորացած պա-
լարիկներից պատրաստված սուսպենզիաներով, ինչպես նաև
Մօսկվայից բերված նիտրագինով: Երկու տարբաժակություն-
ները պարզել են, որ լյուսինի տարրեր տեսակները պալարա-
բակաների համար նույն շտամով վարակելու դեպքում միենույն
ինտենսիվությամբ չեն վարակվում: Փորձարկվող տեսակներից
շատերը նույնիսկ բոլորովին չեն վարակվում և պալարիկներ
չեն առաջացնում:

Ալյուստակ

Լյուպինի տարբեր տեսակների վարակվածությունը՝ միենույն նիտրագինով
վարակելու դեպքում (Մարտունու և Երևանի փորձադաշտերում 1948 թ.)

Վարակվածության ինտենսիվությունը

Փորձարկվող տեսակները

Երևանի փորձա-
դաշտումՄարտունու փոր-
ձադաշտում*Lupinus albus*

Լավ վարակված

110 բույսից 35-ի
վրա կա 1—2 պալար*albococcineus*

Չի վարակվել

110 բույսից 26-ի
վրա կա 1—2 պալար*luteus*

«

60 բույսից մեկի
վրա կա մեկ մեծ
պալար*angustifolius*

Թույլ վարակված

Չի վարակվել

pilosus

Չի վարակվել

«

hartvegi

«

«

insignis

«

«

nanus

—

«

mutabilis

Չի վարակվել

«

albus (ալկոլոխային ձե)

Մեջակ վարակված

«

barcer

—

«

albus (իտալական)

Թույլ վարակված

—

hiamis

Չի վարակվել

—

Ինչպես տեսնում ենք, փորձարկվող 13 տարբեր տեսակի լյուպիններից Մարտունու փորձադաշտում պայմանական բիոմա-
ներով վարակվել են ընդամենը 3 տեսակ, իսկ Երևանի փորձա-
դաշտի պայմաններում՝ 4 տեսակ: Մնացածների վրա ոչ մի
պալար չի առաջացել: Սակայն, ուշագրավ է և այն փաստը, որ
երկու փորձադաշտերում վարակվել են ոչ թե նույն տեսակները,
այլ տարբեր տեսակներ: Սա գույց բացատրվում է տվյալ փոր-
ձադաշտի բնական պայմանների տարբերությամբ, որոնք լյու-
պինի տարբեր տեսակների համար միենույնը չէին կարող լի-
նել: Քանի որ այդ երկու փորձադաշտերը միանգամայն տարբեր
գոտիներում են գտնվում — Երևանի փորձադաշտը՝ դաշտավայ-
րում, իսկ Մարտունու փորձադաշտը՝ բարձր լեռնային գոտում:

Այսպիսով, բերված տվյալներով հաստատվում է, որ նույն
թիթեռնածաղկավոր բույսերի տարբեր սորտերը, անսակները
և պոպուլացիաները միենույն ինտենսիվությամբ՝ չեն վարակ-

ում պալարաբակտերիաների միևնույն շտամներով, թե ընական լայմաններում և թե արհեստական վարակման (նիտրագինի-ացիայի) դեղքում: Սա, հավանական է, բացատրվում է մեռողմից՝ պալարաբակտերիաների նեղ մասնագիտացմանը դեպի ջրիթեռնածաղկավոր բույսերի տարրեր տեսակները և մյուս ողմից՝ բույսերի իրենց անհատական բիոլոգիական առանձնատեսկությամբ:

Վերը բերած տվյալները և մի շարք այլ դիտողություններ խոսում են այն մասին, որ այսուհետեւ նիտրագինը չպետք է պատրաստել պալարաբակտերիաների նույն ստանդարտ շտամներով, թիթեռնածաղկավոր բույսերի տարրեր տեսակների, սորտերի, էկոտիպերի և տարրեր հողակիմայական պայմանների համար: Անհրաժեշտ է լայն ընտրության ձանապարհով հայտնաբերել պալարաբակտերիաների այնպիսի ռասաներ, որոնք համեմտաբար նույն էֆեկտիվությունն ունենան տվյալ թիթեռնածաղկավոր բույսերի տնտեսական նշանակությունն ունեցող առնվազն մի քանի սորտերի և պոպուլացիաների համար:

Գ. Բ. Ա. Խ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ

Израильский В. П.—1933. Клубеньковые бактерии и нитрагин. Сельхозгиз.

Кореняко А. И. и Красильников Н. А.—1948. Влияние растительного покрова на развитие и активность клубеньковых бактерий в почве. Пути повышения активности клубеньковых бактерий. Огиз. Сельхозгиз.

Красильников Н. А.—1941. Изменчивость клубеньковых бактерий. ДАН СССР, том XXXI, № 1

Красильников Н. А.—1945. Прививка новых свойств клубеньковым и некоторым неклубеньковым бактериям. Микробиология, т. XIV вып. 4.

Красильников Н. А. и Кореняко А. И.—1946. Влияние неклубеньковых бактерий на рост и азотфиксацию бобовых растений. Микробиология, том XV, вып. 5.

Лопатина Г. А.—1932. Исследования над клубеньковыми бактериями. II. Материалы по обследованию образования клубеньков у бобовых растений. Труды Института Сельхоз. микробиологии, т. IV вып. 3.

Меграбян А. А.—1946. Морфологические и физиологические свойства клубеньковых бактерий французской чечевицы. Микробиол. сборник, вып. 11, Ереван.

- Меграбян А. А.—1946а. Вирулентность и активность клубеньковых бактерий французской чечевицы. Микробиол. сборник, вып. II, Ереван.
- Паносян А. К.—1946. Влияние экологических факторов на некоторые биологические особенности клубеньковых бактерий люцерны. Микробиол. сборник, вып. II, Ереван.
- Петросян А. П.—1944. Клубеньковые бактерии эспарцетов Армянской ССР. Сборник трудов Института Земледелия АН Арм. ССР. Ереван.
- Разумовская З. Г.—1937. Образование клубеньков у различных сортов гороха. Микробиология, том VII, вып. 3.

А. П. Петросян и С. А. Карагулян

Интенсивность клубенькообразования у различных видов и сортов одного и того же бобового растения

В связи с широким внедрением травопольных севооборотов бобовые растения приобретают еще большее значение как основной компонент этих севооборотов. Вследствие этого, выявление путей наиболее рационального использования атмосферного азота будет иметь большое значение в поднятии урожайности культур, входящих в травопольные севообороты.

Наиболее эффективный симбиоз клубеньковых бактерий с бобовыми растениями обусловливается согласованным воздействием некоторых существенных факторов: внешние условия возделывания растений, особенности вида, сорта, популяции, специфичность клубеньковых бактерий данной культуры и др.

В настоящей работе излагаются результаты изучения интенсивности клубенькообразования у различных видов и сортов одного и того же бобового растения, в одинаковых условиях опыта.

Исследование подверглись многочисленные виды и сорта маша, нута, фасоли, люпина, люцерны, эспарцета. В результате проведенных работ установлено, что в условиях естественного заражения и при инокуляции различные виды и сорта заражаются с неодинаковой интенсивностью.

Так, из 13 видов люпина при инокуляции московским нитрагином в условиях Ереванского опытного поля Института земледелия (низменная зона) заразились только четыре вида, а на Мартунинском опытном поле (горная зона)— три вида, остальные 9—10 видов остались незараженными.

Необходимо также отметить, что на двух опытных полях заразились не одни и те же виды люпина.

Испытывались также 10 сортов и популяций маша, которые в естественных условиях, на одном и том же участке заразились в различной степени. На 15-ти растениях популяции Карчеван-белый образовалось 210 клубеньков, весом 8,25 г, Карчеван-черный—90 клубеньков, весом 14,0 г, Кировабадский сорт дал 205 клубеньков, весом 29,75 г, Октемберян-белый—450 клубеньков, весом 24,25 г. Наряду с этим популяция Мегри-белый имела 75 клубеньков, весом 1,25 г, Аштарак-Парби желтый—35 клубеньков, весом 1,85 г.

Аналогичные данные получены при изучении 30 различных сортов и популяций нута. На 20 растениях популяции Аштарак-Тулинаби образовалось 525 клубеньков, весом 28,85 г, кубанский сорт 199 из Степанакерта дал 675 клубней, весом 25,35 г. Котайк-Нурнус—175 клубеньков, весом 4,10 г и Степанакерт-Саруши—111 клубней, весом 3,5 г.

Таким образом, данными настоящей работы подтверждается, что различные сорта и популяции бобовых растений различно относятся к одним и тем же штаммам клубеньковых бактерий. Основной причиной этого явления могут быть почвенно-климатические условия, видовые и сортовые особенности бобовых растений, их иммунитет к определенным культурам клубеньковых бактерий и специфичность испытуемых штаммов к данным растениям. Отсюда можно сделать вывод о нецелесообразности приготовления нитрагина стандартными штаммами клубеньковых бактерий.

Необходимо широким подбором выявить такие штаммы, которые будут сравнительно эффективными для некоторых широко применяемых в практике сортов бобовых культур.